Քննարկված և հաստատված է՝
«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի
նախագահ Հ.Ալեքսանյան

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ

- 2022 -

ԸՆԹԱՑԿԱՐԳ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույնով սահմանվում է «Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Քոլեջ/ միջին մասնագիտական կրթությամբ ոլորտային՝ «Դիզայն», և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությունների ընդունելության քննությունների կազմակերպման և անցկացման ընթացքը:
2. Սույն ընացակարգի համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ ԿԳ նախարարի 05 ապրիլի 2012թ թիվ 254-Ն հրամանը:
3. Սույն ընթացակարգը սահմանում է Քոլեջի տնօրենական և /կամ/ մանկավարժական խորհուրդը, հաստատում, ինչպես նաև նրանում լրացումներ և փոփոխություններ կատարում է Քոլեջի Կառավարման խորհուրդը:
4. Սույն ընթացակարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի Կառավարման խորհրդի հաստատումից հետո:
5. Ընդունելության քննությունները կազմակերպվում են Քոլեջում:
6. Ընդունելության քննություններն անցկացվում են՝

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտություն «Մասնագիտություն» առարկայից՝ դիմորդը հանձնում է՝

Վազք 60 մետր/վրկ/
Վազք-1000 մետր/տղաներ/
Վազք-500 մետր/աղջիկներ/
Եռացատկ/սմ/
Ձգումներ բարձր պտտաձողից /անգամ/-տղաներ
Մեջքին պառկած դրությունից,ձեռքերը ծոծրակին իրանի բարձրացում և իջեցում/անգամ/-աղջիկներ

Վերջնական միավորը որոշվում է 4 վարժությունների միջին թվաբանականով: /ձևաչափ 1/

«Դիզայն» մասնագիտություն
«Գծանկար» առարկայից, քննությանը տրվում է մինչև 540 րոպե /3 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ/:
«Գունանկար» առարկայից, քննությանը տրվում է մինչև 360 րոպե /2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ/:
«Կոմպոզիցիա» առարկայից, քննությանը տրվում է մինչև 450 րոպե /2 օր՝ յուրաքանչյուր օրը 5 ակադեմիական ժամ/:

7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դիմորդների համար քննության ժամանակը կարող է լրանալ լրացուցիչ 30 –ից 40 րոպե:

8. Ընդունելության քննություններն անցկացնում են քննական հանձնաժողովները՝ Քոլեջի տնօրենի հաստատած ժամանակացույցի համաձայն:

9. Ընդունեելության քննությունների ժամանակացույցը հաստատվում է լիազոր մարմնի կողմից տեղերը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Քննական առարկաներից Քոլեջը տրամադրում է խորհրդատվություններ, որի ժամանակացույցը հաստատում է Քոլեջի տնօրենը՝ քննությունների ժամանակացույցը հաստատելուց հետո՝ առնվազն 2 օրվա ընթացքում: